ArmLur.am

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

I SSN 1829-2763

16 մայիսի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

61 (3270)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՎԱՐՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՏՈՒԳԱՆՈՒՄ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններ է ստանում այն մասին, որ ՆԳ նախարար Արփինե Սարգսյանի հրամանով իրականացվում է ուժեղացված ծառայություն ճանապարհային ոստիկանության գծով: Ըստ այդ նույն տեղեկությունների՝ ուժեղացված հսկողության շրջանակում վարորդներին կանգնեցնում են առանց նախապես իրազեկման կամ կանխարգելիչ ակցիաների, անմիջապես տուգանում՝ մասնավորապես տեխնիկական զննություն չանցնելու եւ կողքից ինչ իրավախախտում նկատեն, նաեւ այդ առիթով: Շատ վարորդների շրջանում առաջացել է դժգոհություն՝ կապված այն հանգամանքի հետ, որ վերահսկողությունը հաճախ ընկալվում է ոչ թե որպես կանխարգելիչ միջոց, այլ բացառապես տուգանքների կիրառման ուղղվածություն ունեցող գործընթաց: Մինչդեռ վերահսկողական միջոցառումները պետք է լինեն ոչ միայն պատժիչ, այլ նաեւ իրազեկող եւ կանխարգելող քայլեր՝ նվազեցնելով անակնկալ տուգանքների եւ սոցիալական լարվածության ռիսկերը: Մինչդեռ պարեկային ծառայության աշխատակիցները կոնկրետ ժամերի կոնկրետ վայրերում գաղտագողի ծառայություն են իրականացնում՝ գերնպատակ ունենալով ամեն գնով տուգանել վարորդներին: Կարճ ասած, նախընտրական Հայաստանում քաղաքացին տուգանքի մատերիալ է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը թիմի հետ դռնփակ հանդիպումներում հորդորել է ՔՊ-ականներին անձամբ վարչական շրջան առ վարչական շրջան, մարզ առ մարզ քարոզարշավ իրականացնել՝ անկախ կարգավիճակից՝ նախարար են, պատգամավոր, թե մարզպետ: Բոլորը պետք է մտնեն մարդկանց տները, այլ ոչ թե ինչ-որ անծանոթ երիտասարդներ՝ բուկլետներ տարածեն: Մեր տեղեկություններով՝ Փաշինյանը թիմակիցներից պահանջել է ոչ միայն շրջել փողոցներով, տուն առ տուն շփվել քաղաքացիների հետ, այլ պետք է ամեն երեկո զեկուցեն թիմակիցները, թե իրականում մարդիկ ինչ են մտածում իշխանության ու հատկապես ՔՊ-ի մասին: Ըստ այդմ, ՔՊ-ն հասկանում է, թե որտեղ են թույլ, եւ սկսում են այդ մասում լավ աշխատել:

Մանկավարժական համալսարանի պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանի, նրա որդու եւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, գրոսմայստեր Սմբատ Լպուտյանի դեմ հարուցված քրեական գործով նախաքննության ավարտ է հայտարարվել: «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ ապրիլի 18-ին ձերբակալվել էին Մանկավարժական համալսարանի պրոռեկտորին, նրա որդուն եւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, գրոսմայստեր Սմբատ Լպուտյանին: Ավելի ուշ նրանց մեղադրանք էր առաջադրվել, որից հետո նրանք ազատ էին արձակվել: Ըստ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում ծառայողական լիազորությունները չարաշահելու, խարդախություն կատարելու, դրան օժանդակելու եւ պաշտոնեական կեղծիք կատարելու մեղադրանքներով ձերբակալվել էին Հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտորը եւ մի շարք այլ աշխատակիցներ: Ավելին, հայտնել էինք, որ պրոռեկտոր Մ. Իսպիրյանը նախաքննության ընթացքում պետությանը պատճառված վնասը փոխհատուցելու նպատակով, պետական բյուջե են վճարել մոտ 5 միլիոն դրամ:

⇨ *էջ 4*



2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ՝ «Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել քաղաքական ուժերի ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների կենսագրություններն ու գույքային հայտարարագրերը: Այս անգամ ուշադրության կենտրոնում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի 7-րդ համարը՝ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանը: Ռուբինյանի՝ 2025 թվականի տարեկան հայտարարագրից պարզ է դառնում, որ նա հաշվետու տարում Երեւանում ձեռք է բերել բնակարան եւ ավտոկայանատեղի: Բնակարանը, որը գնվել է «Կանաչ Թաղ» ՍՊԸ-ից, էլիտար եւ թանկարժեք բնակարան է, որը արժեցել է 47 մլն դրամ, իսկ ավտոկայանատեղին՝ 5 մլն դրամ: Երկու անշարժ գույքերն էլ ձեռք են բերվել 2024 թվականի նոյեմբերի 26-ին եւ նրա միանձնյա սեփականությունն են: ԱԺ փոխնախագահը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել, սակայն ներդրումներ է կատարել պարտատոմսերում: Մասնավորապես 2025 թվականի նոյեմբերի 4-ին «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ից ձեռք է բերել ավելի քան 6 մլն դրամ արժողությամբ պարտատոմսեր, իսկ նույն տարվա դեկտեմբերի 19-ին՝ եւս 4 մլն դրամից ավելի պարտատոմսեր:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ՄԻՇՏ ԼԻՆՈՒՄ ԵՆ»

ArmLur.am-ը զրուցել է ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ալխաս Ղազարյանի հետ:

- Տիկին Ղազարյան, ի վերջո որոշում կա՞ Հայաստանը մնում է ԵԱՏՄ-ում, թե՞ շարժվում է դեպի ԵՄ: Հաշվի առնելով, որ մայիսի 28-29-ին տեղի է ունենալու ԵԱՏՄ գագաթնաժողովը, մինչեւ մայիսի 27-ը Հայաստանը պետք է հստակեցնի իր դիրքորոշումը:

- Մենք բազմիցս ասել ենք՝ երբ ժամանակը գա, համապատասխան որոշումը կկայացվի: Ինչ վերաբերում է գագաթնաժողովին, վարչապետն արդեն նշել է, որ ինքը չի կարող մասնակցել, եւ հավանաբար կմասնակցի փոխվարչապետը: Այս պահին որեւէ կտրուկ որոշման հարց օրակարգում չկա:

- Բայց քաղաքական հստակեցում, այնուամենայնիվ, անհրաժե՞շտ չէ մինչեւ մայիսի վերջ:

- Ես նման հստակ որոշման վերաբերյալ ինֆորմացիա չունեմ: Գործընկերային հարաբերությունների եւ փոխգործակցության շրջանակում հարցերը քննարկվում են, եւ այս պահին չեմ կարծում, որ իրավիճակը հասունացել է կտրուկ քայլերի համար:

- Այս ընթացքում տեսնում ենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեն պարբերաբար հրապարակում է գաղտնալսումներ: Ինչո՞ւ է թիրախում հիմնականում «Ուժեղ Հայաստանը», որը, շատերի կարծիքով, իշխանության հիմնական մրցակիցն է:

- Ես հակառակ կողմից կդիտարկեի հարցը: Կարծում եմ՝ հենց այդ ուժն է առավել հակված ընտրակեղծարարության եւ ընտրակաշառքի միջոցով ձայներ հավաքելուն: Այդ պատճառով էլ հայտնվում է իրավապահների ուշադրության կենտրոնում: Գործընթացը մասշտաբային բնույթ ունի, եւ դուք տեսնում եք՝ ամեն օր նոր ձայնագրություններ են հրապարակվում:

- «Ուժեղ Հայաստանի» անդամ Արթուր Ավանեսյանը կալանավորվել է այն բանից հետո, երբ հայտարարել է՝ «եթե ընտրվենք, գործ էլ է լինելու, հող էլ է լինելու, վերադարձնելու ենք»: Բայց նույն տրամաբանությամբ Նիկոլ Փաշինյանն էլ է խոստացել աշխատատեղեր, գյուղերի զարգացում: Ինչո՞ւ մեկը դիտարկվում է որպես խախտում, իսկ մյուսը՝ ոչ:

- Շատ պարզ տարբերություն կա: Այդ հայտարարությունները հաճախ հիպոթետիկ բնույթի են լինում եւ փաստական հիմք չեն ունենում: Բայց եկեք արձանագրենք՝ այսօր Հայաստանում առաջին անգամ արտագաղթի փոխարեն ներգաղթ է արձանագրվում: Սա նշանակում է, որ մարդիկ իրենց ապագան տեսնում են Հայաստանում:

- Բայց քաղաքական խոստումները բոլորի մոտ էլ կան, չէ՞:

- Քաղաքական խոստումներ միշտ լինում են: Եթե կա կոնկրետ խոսք կամ հայտարարություն, որը իրավապահների համար կարող է խնդիր առաջացնել, ապա պետք է հղում անել կոնկրետ մեջբերմանը, կոնտեքստին եւ իրավիճակին: Եթե իրավապահները խախտում տեսնեն, վստահ եմ՝ արձագանք կլինի:

- Տեսանյութերից մեկում նաեւ երեւում էր, որ քաղաքացուն նվեր է տրվել՝ ասելով, թե «դատարկ ձեռքով տուն չեն մտնում»: Դա ընտրակաշառքի տպավորություն չի՞ ստեղծում:

- Անկեղծ ասած՝ նման դեպք չեմ հիշում: Ես գրեթե միշտ ներկա եմ եղել միջոցառումներին, բայց նման բան չեմ նկատել: Եթե կոնկրետ դեպքի մասին տեղեկություն չունեմ, ճիշտ չեմ համարում մեկնաբանել:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՃՆՇՈՒՄՆԵՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Դիլիջանի բազմագործառութային պետական քոլեջի աշխատակազմը բաց նամակով դիմել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին՝ բարձրաձայնելով քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի շուրջ ստեղծված իրավիճակի մասին:

ArmLur.am-ին քոլեջի աշխատակազմը բաց նամակն է ուղարկել: Աշխատակազմի ներկայացուցիչները նշում են, որ քոլեջների միավորման սկզբնական փուլում մտավախություններ են ունեցել հնարավոր կրճատումների եւ աշխատատեղերի կորստի վերաբերյալ, սակայն այդ անհանգստությունները, նրանց խոսքով, չեն իրականացել: «Այն մտավախությունը, որ երկու քոլեջների միաձուլման արդյունքում հնարավոր է կորցնեինք մեր աշխատատեղը, կլինեն կրճատումներ, ի չիք եղան, ավելին՝ բոլորս ապահովված ենք աշխատանքով»,- ասված է դիմումում: Նամակի հեղինակները ընդգծում են, որ միավորված քոլեջը արդեն ավելի քան մեկ տարի ղեկավարում է տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վահագն Հովհաննիսյանը, որի աշխատանքի ընթացքում, ըստ աշխատակիցների, հաջողվել է ձեւավորել համախմբված եւ կայուն կոլեկտիվ: Նրանք նշում են, որ, չնայած շենքային խնդիրներին, ուսումնական գործընթացը կազմակերպվում է բնականոն հունով, իսկ դիմորդների հոսքը շարունակում է պահպանվել: Սակայն աշխատակազմը մտահոգություն է հայտնում այն հանգամանքի վերաբերյալ, որ շուրջ մեկ տարի է՝ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ չի անցկացվում: Դիմումում նաեւ պնդում է արվում, թե ճնշումներ են գործադրվում տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վահագն Հովհաննիսյանի նկատմամբ՝նրան աշխատանքից հեռանալու եւ առաջիկա մրցույթին չմասնակցելու նպատակով: «Ըստ մեզ հասած հավաստի տեղեկությունների՝ ճնշումներ են գործադրվում մեր տնօրենի պաշտոնակատարի վրա, որպեսզի վերջինս իր դիմումի համաձայն ազատվի աշխատանքից, չմասնակցի մրցույթներին»,- նշվում է նամակում: Աշխատակազմը պահանջում է, որպեսզի տնօրենի ընտրության գործընթացն իրականացվի բացառապես օրենքի շրջանակում եւ առանց որեւէ միջամտության: «Մենք դեմ ենք ցանկացած տեսակի բռնություններին եւ ճնշումներին: Պարզապես ցանկանում ենք, որ գործի օրենքը եւ չլինեն անօրինականություններ»,- ընդգծել են դիմումի հեղինակները: Քոլեջի աշխատակիցները նաեւ պահանջում են հանդիպում պատասխանատու գերատեսչությունների ներկայացուցիչների հետ՝ ստեղծված իրավիճակի եւ իրենց հուզող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով:

ԻՐԻՆԱ ԱՏԱՆՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Փոխվարչապետ Միեր Գրիգորյանը եւ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը երեկ Կառավարությունում հանդիպում են ունեցել Հայաստանում Ամերիկայի առեւտրի պալատի տնօրենների խորհրդի անդամների եւ գործադիր թիմի հետ եւ քննարկել են ԱԺ առաջին ընթերցմամբ հաստատված «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագծի հետ կապված հարցեր: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել դեպի Հայաստան որակյալ ներդրումների հոսքի ինտենսիվացման կարեւորությանը եւ երկրի ներդրումային միջավայրի գրավչության բարձրացման հարցերին: Փոխվարչապետը կարեւորել է այս ձեւաչափով հանդիպումները՝ երկրում իրականացվող բարեփոխումների մշակման շրջանակներում գործարար համայնքի ներգրավվածության եւ նոր խթանների մշակման տեսանկյունից:

ՀՀ ՍԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԼՈՆԴՈՆ

2026 թվականի մայիսի 11-12-ը Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այց է իրականացրել Միացյալ Թագավորություն: Լոնդոնում ընթացող աշխատանքային այցի շրջանակում ՀՀ Սահմանադրական դատարանի պատվիրակությունը մայիսի 11-ին այցելել է Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարան, որտեղ հանդիպում է ունեցել ՄԹ Գերագույն դատարանի նախագահ Լորդ Ռիդի եւ ՄԹ Գերագույն դատարանի փոխնախագահ Լորդ Սեյլսի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են դատական իշխանության անկախության ապահովման, դատական առաջնորդության, ինչպես նաեւ հանրային վստահության պահպանման հիմնարար հարցերը: Կողմերը կարեւորել են սահմանադրական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության շարունակական զարգացումը եւ փորձի փոխանակման անհրաժեշտությունը: Հանդիպման ավարտին ՍԴ նախագահ Արման Դիլանյանը եւ Լորդ Ռիդը հուշանվերներ են փոխանակել: Արման Դիլանյանը գրառում է կատարել ՄԹ Գերագույն դատարանի այցելուների հուշամատյանում: ՄԹ Գերագույն դատարանում տեղի են ունեցել նաեւ մի շարք բարձր մակարդակի հանդիպումներ՝նվիրված դատական անկախության, դատարանների կառավարման եւ հանրային հաղորդակցության հարցերին: Պատվիրակությունը շրջայց է կատարել Միացյալ Թագավորության Գերագույն դատարանում, ծանոթացել դատարանի գործունեության առանձնահատկություններին, կառուցվածքին եւ իրավասությանը: Այնուհետեւ կայացել է մասնագիտական քննարկում դատարանի հաղորդակցության եւ արտաքին կապերի ղեկավարության հետ: Քննարկվել են դատական իշխանության հաղորդակցման ժամանակակից գործիքները, լրատվամիջոցների հետ աշխատանքի մեխանիզմները, թվային հաղորդակցության ռազմավարությունները, ինչպես նաեւ հանրային վստահության ամրապնդման ուղղությամբ իրականացվող ծրագրերը: ՀՀ ՍԴ նախագահ Արման Դիլանյանի գլխավորած պատվիրակության կազմում հանդիպումներին մասնակցել են ՀՀ ՍԴ դատավորներ Սեդա Սաֆարյանը, Հովակիմ Հովակիմյանը, Արտակ Ջեյնալյանը, ՍԴ աշխատակազմի ներկայացուցիչներ: - Հանդիպումներին մասնակցել են նաեւ Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վարուժան Ներսիսյանը, Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչներ, Միացյալ Թագավորության արդարադատության նախարարության պաշտոնյաներ: Այցը կազմակերպվել է Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում սահմանադրական արդարադատության զարգացմանը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի շրջանակում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԿՈՐՑՆԵԼ

Ռուսական «РИА Новости»-ի հաղորդմամբ՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ Հայաստանը կարող է կորցնել Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակում գործող բոլոր արտոնությունները:

Լավրովի խոսքով՝ Ռուսաստանի եւ Հայաստանի հարաբերությունները շարունակում են մնալ «մոտ եւ դաշնակցային», սակայն միաժամանակ՝ բարդ: Նա նշել է, որ Արեւմուտքը փորձում է, իր ձեւակերպմամբ, Հայաստանի վրա ազդեցություն հաստատել եւ խզել նրա տնտեսական, առեւտրային եւ ներդրումային կապերը ԱՊՀ եւ ԵԱՏՄ գործընկերների հետ: ՌԴ արտգործնախարարը հիշեցրել է, որ Հայաստանը ցանկանում է դառնալ Եվրամիության անդամ, սակայն դրա համար պետք է համապատասխանել ԵՄ չափանիշներին: Նրա խոսքով՝ ՀՀ խորհրդարանը դեռեւս փետրվարին առաջին ընթերցմամբ ընդունել է Եվրամիությանն անդամակցության գործընթաց սկսելու մասին օրինագիծ: Լավրովը նաեւ ընդգծել է, որ ԵՄ-ին անդամակցելու գործընթացը անհամատեղելի է ԵԱՏՄ-ում անդամակցության հետ: Մինչ այդ, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը կոչ էր արել հայկական իշխանություններին չհետաձգել Եվրասիական տնտեսական միությունում մասնակցության հարցի լուծումը՝ նշելով, որ Հայաստանը ստանում է զգալի տնտեսական առավելություններ՝ հատկապես գյուղատնտեսության, վերամշակող արդյունաբերության, միգրացիայի եւ մաքսային ոլորտներում: Պուտինը նաեւ ընդգծել էր, որ ԵԱՏՄ եւ ԵՄ միաժամանակյա անդամակցությունը գործնականում անհնար է, եւ առաջարկել էր թեման քննարկել առաջիկա գագաթնաժողովներից մեկի ընթացքում:

Ա. Վ.

ԱՄՆ-Ն ԳՈՐԾՈՒՄ Է Ի ՎՆԱՍ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

Վաշինգտոնը գործողություններ է ձեռնարկում Ռուսաստանին վնասելու համար՝ չնայած Ուկրաինայում հակամարտության կարգավորման շուրջ ընթացող բանակցություններին, ՌԻԱ Նովոստիին ասել է Ռուսաստանի փոխարտգործնախարար Ալեքսանդր Պանկինը: Որպես օրինակ՝ նա նշել է «բոլոր տեսակի պատժամիջոցները», որոնց ցանկը ընդլայնվում է: Դիվանագետը հավելել է, որ նկատվում են պատժամիջոցների որոշակի մեղմացումներ, սակայն դրանք զուտ օպորտունիստական են: Նա հիշեցրել է, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը խոսել է Ուկրաինայի ճգնաժամը կարգավորելու իր ցանկության մասին: Պանկինը հույս է հայտնել, որ իր խոստումները կհաստատվեն գործողություններով:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԼԻԼԻԹ ՄԱԿՈՒՆՑԻ ՄԻԼԻԱՐԴԱՆՈՑ «ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ»

2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ՝ իշխանական թիմի ներկայացուցիչների գույքային հայտարարագրերը շարունակում են հայտնվել հանրային ուշադրության կենտրոնում: Այս անգամ բնաբակումների թիրախում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի 15-րդ համարը՝ վարչապետի գլխավոր խորհրդական Լիլիթ Մակունցը, որի ներկայացրած հայտարարագրում առկա թվերը ոչ միայն զարմանք, այլեւ լուրջ հարցեր են առաջացնում:

2025 թվականի օգոստոսի 28-ին ԱՄՆ-ում ՀՀ դեսպանի պաշտոնից վերադառնալուց հետո Մակունցը նշանակվեց վարչապետի գլխավոր խորհրդական: Սակայն նրա պաշտոնական հայտարարագրում առավել ուշագրավը ոչ թե նոր պաշտոնն է, այլ եկամուտների բաժնում արձանագրված աղմկահարույց թիվը: Ըստ հայտարարագրի՝ միայն ՀՀ արտաքին գործերի նախարարությունից աշխատանքի վարձատրության տեսքով Լիլիթ Մակունցը ստացել է 1 միլիարդ 308 միլիոն 351 հազար 200 դրամ: Այո՛, ավելի քան մեկ միլիարդ դրամ՝ պետական աշխատավարձի տեսքով: Սրան գումարվել են նաեւ վարչապետի աշխատակազմից ստացած 3 մլն 214 հազար դրամը, ԱԳՆ-ից հավելյալ 2 մլն 851 հազար դրամ վճարումը եւ 2 մլն 297 հազար դրամ եկամտային հարկի վերադարձը:

Արդյունքում՝ Մակունցի հայտարարագրված տարեկան եկամուտը հատել է 1 միլիարդ 317 միլիոն դրամի շեմը: Այս թվերը, բնականաբար, բուռն արձագանք են առաջացրել նախընտրական քարոզարշավի ընթացքում: Հանրության շրջանում սկսեցին հարցեր հնչել՝ ինչպե՞ս կարող էր պետական պաշտոն զբաղեցնող անձը մեկ տարում նման չափի աշխատավարձ ստանալ, հատկապես այն պայմաններում, երբ իշխանությունները շարունակ խոսում են սոցիալական արդարությունից եւ պետական համակարգում «համեստ ծառայությունից»:

Սակայն սկանդալային թվերի հրապարակումից հետո Լիլիթ Մակունցը փորձեց մեղմել իրավիճակը՝ հայտարարելով, թե խոսքը «տեխնիկական վրիպակի» մասին է: «Ստորակետի պակասի պատճառով վերջում երկու զրո է ավելացել»,- լրագրողների հետ զրույցում արդարացել էր նա՝ վստահեցնելով, որ ստացել է իր պաշտոնին համապատասխանող սովորական աշխատավարձ, ոչ թե միլիարդ դրամ:

Բայց այստեղ առաջանում է ամենակարեւոր հարցը. եթե դա ընդամենը տեխնիկական սխալ է, ապա ինչո՞ւ մինչ օրս հայտարարագիրը պաշտոնապես չի շտկվել: Փաստացի, հրապարակային հարթակում շարունակում է մնալ հենց միլիարդանոց աշխատավարձի տվյալը, իսկ հանրությունը դեռեւս չի տեսել որեւէ պաշտոնական ուղղում կամ ճշգրտված թիվ: Ստացվում է պարադոքսալ իրավիճակ. իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչը խոսում է «վրիպակից», սակայն պետական ռեգիստրում շարունակում է պահպանվել բոլորովին այլ իրականություն: Միեւնույն ժամանակ հայտարարագրից պարզ է դառնում, որ Մակունցը 2025 թվականին ձեռք է բերել բնակարան բազմաբնակարան շենքում՝ 35 մլն 296 հազար 115 դրամ արժեքով: Գործարքը կատարվել է «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ի հետ: Նույն գումարի չափով հայտարարագրվել է նաեւ փոխառություն՝ կրկին «Ջերմուկ Գրուպ»-ից: Տարեվերջի դրությամբ նրա վարկային պարտավորությունները կազմել են ավելի քան 28 մլն դրամ:

Մակունցը չի հայտարարագրել որեւէ տրանսպորտային միջոց: Նրա բանկային հաշիվներում եղել է 19 հազար 81 դոլար եւ ավելի քան 1 մլն դրամ, իսկ կանխիկ միջոցները կազմել են 500 հազար դրամ: Հիշեցնենք, որ Լիլիթ Մակունցը մասնագիտությամբ բանասեր է: Նա ղեկավարել է ԱԺ «Իմ քայլը» խմբակցությունը, եղել մշակույթի նախարար, ապա՝ Հայաստանի դեսպանը ԱՄՆ-ում: 2025 թվականի օգոստոսի 29-ից զբաղեցնում է վարչապետի գլխավոր խորհրդականի պաշտոնը:

Սակայն անկախ կենսագրական ճանապարհից՝ գլխավոր հարցը մնում է անպատասխան. իրականում որքան եկամուտ է ստացել վարչապետի գլխավոր խորհրդականը, եւ ինչպե՞ս է հնարավոր, որ նման աղմկահարույց «տեխնիկական սխալը» մինչ օրս շարունակի մնալ պաշտոնական հայտարարագրում: Քանի դեռ փաստաթուղթը չի շտկվել, հանրային կասկածներն ու հարցերը միայն խորանալու են:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍՏԻՊՎԱԾ ԿԼԻՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ

Ինչ-որ պահի Հայաստանը ստիպված կլինի ընտրություն կատարել ԵԱՏՄ-ի եւ ԵՄ-ի միջեւ, եւ Ռուսաստանը ըմբռնումով կմոտենա Երեւանի ընտրությունը, ասել է Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը, փոխանցում է «ՌԻԱ Նովոստի»-ն: «Իհարկե, ինչպես բազմիցս ասել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինը, մենք կհասկանանք հայ ժողովրդի ցանկացած ընտրություն: Նրանք խոսում են Եվրամիությանը մերձենալու իրենց ցանկության մասին: Մենք բազմիցս ասել ենք, որ ԵԱՏՄ-ին եւ ԵՄ-ին անդամակցությունը անհամատեղելի է: Հայաստանը շատ լավ հասկանում է սա, ինչ-որ պահի նրանք ստիպված կլինեն նման ընտրություն կատարել, եթե որոշեն դա անել»,- ասել է նա Կազանում կայացած ֆորումի շրջանակներում: «Հայաստանը մեզ համար շատ մտերիմ երկիր է, դաշնակից: Այն Եվրասիական տնտեսական միության, ԱՊՀ-ի եւ ՀԱՊԿ-ի անդամ է: Եվ մեզ միավորող մարդկային կապերը շատ խորն են, շատ լուրջ եւ շատ երկարատեւ: Եվ մենք մեծ հարգանք ունենք Հայաստանի ժողովրդի նկատմամբ»,- ընդգծել է Օվերչուկը:

ՄԵԿ ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Եվրոպայում կարող է նոր հակամարտություն բռնկվել՝ կապված Գերմանիայից Լեհաստան ամերիկյան զորքերի տեղափոխման հետ, հայտարարել է ԱՄՆ բանակի պաշտոնաթող գնդապետ Լոուրենս Ուիլկերսոնը Dialogue Works YouTube ալիքում: Նրա խոսքով՝ Լեհաստանի կառավարությունը քննարկում է Միացյալ Նահանգներին առաջարկելու հնարավորությունը, որ այն դառնա «նոր Գերմանիա»: Այս առումով՝ փորձագետը կոչ է արել վերանայել Բեռլինի եւ Վարշավայի միջեւ վերջին 100 տարվա հարաբերությունները, ինչպես նաեւ Լեհաստանի եւ Ռուսաստանի միջեւ հարաբերությունները: Նա պնդել է, որ զորքերի տեղափոխման սցենարը կհանգեցնի նոր «ավերիչ» սրման: Ամերիկացի զինվորականը ենթադրել է, որ Լեհաստանի կառավարության դիրքորոշումը ցույց է տալիս դրա անբավարարությունը: «Սա միայն ցույց է տալիս, թե որքան արագ ենք մենք շարժվում դեպի համաշխարհային հակամարտություն: Եւ այն մարդիկ, որոնց հետ ես խոսել եմ Լեհաստանում այս մասին, կարծում են, որ իրենց կառավարությունը խելագար է: Լիովին խելագար», - ասել է Ուիլկերսոնը:

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ԱՃԻ ՄԱՍԻՆ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ գարնան սկզբին երկրի տնտեսությունը վերադարձել է աճի փուլ: Նրա խոսքով՝ մարտ ամսին Ռուսաստանի համախառն ներքին արդյունքը աճել է 1,8 տոկոսով: Այդ մասին հայտնում է ՏԱՍՍ-ը: Պուտինը տնտեսական հարցերով խորհրդակցության ընթացքում նշել է, որ տարվա սկզբին գրանցված անկումից հետո տնտեսությունում արդեն նկատվում են դրական փոփոխություններ: Ավելի վաղ նա հայտնել էր, որ հունվար-փետրվար ամիսներին Ռուսաստանի ՀՆԱ-ն կրճատվել էր 1,8 տոկոսով, իսկ հունվարին անկումը կազմել էր 2,1 տոկոս: Ռուսաստանի տնտեսական զարգացման նախարար Մաքսիմ Ռեշետնիկովն էլ հայտարարել է, որ առաջին եռամսյակում բացասական ցուցանիշներին ragmen տնտեսությունում արդեն ձեւավորվում են դրական միտումներ: Նրա խոսքով՝ շարունակվում է քաղաքացիների իրական աշխատավարձերի աճը, իսկ տնտեսության զարգացման գործընթացը միշտ անցնում է աճի եւ կայունացման փուլերով:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

ՊՐՈՌԵԿՏՈՐԻ ԳՈՐԾԸ ԿՔՆՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ

«Ժողովուրդ»-ը հայտնել է, որ նախաքննության ավարտ է հայտարարվել ՀՀ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտորի՝ Մարիամ Խպիրյանի, նրա որդու եւ «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտ» հիմնարկի տնօրեն Սմբատ Լոռեյանի դեմ հարուցված քրեական գործով:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ գործը գտնվում է դատարանում եւ այն մակագրվել է Հակակոռուպցիոն դատարանի նախագահ Խաչիկ Ղազարյանին:

Մարիամ Մկրտիչի Իսպիրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2022 թվականի հունվարի 4-ից զբաղեցնելով ՀՀ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտորի պաշտոնը, հանդիսանալով համալսարանի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրա անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, ի թիվս այլնի, լիազորված լինելով իրականացնելու համալսարանի գործունեության որոշակի ոլորտի անմիջական ղեկավարում, իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իր ծառայողական լիազորություններն օգտագործել է ի վնաս ծառայողական շահերի, այն է՝ ի պաշտոնե լիազորված լինելով իրականացնելու ՀՀ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտ» հիմնարկի անմիջական ղեկավարումը, ունենալով իր իրավասության տակ գտնվող ոլորտի աշխատանքները համակարգելու պարտականություն եւ կրելու իր գործունեության իրականացման արդյունքում իր իրավասության ոլորտների բնականոն գործունեության եւ տեղեկատվության ամբողջականության ու ճշգրտության համար, տեղեկացված լինելով 2022 թվականի հունվարի 14-ին իր որդու՝ Արմեն Սամվելի Ավետիսյանի կողմից ՀՀ ԿԳՄՍՆ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտ» հիմնարկում որպես մասնագետ աշխատանքի ընդունվելու, սակայն աշխատանքի չհաճախելու եւ աշխատավարձ ստանալու մասին, որեւէ միջոց չի ձեռնարկել այդ ուղղությամբ, ինչ արդյունքում ՀՀ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամին պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 5,336,916 ՀՀ դրամ գույքային վնաս:

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉՈՒ Է ԿՏՐՈՒՄ

Գառնիկ Կասոմիկի Բաղդասարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձ, նույն հիմնարկի թիվ 43-րդ խցում մեկանգամյա օգտագործման սափրիչից պատրաստել, պահել եւ կրել է առողջությանը վնաս պատճառելու համար այլ գործիք հանդիսացող առարկա՝ ածելու սայր, որով 2026 թվականի հունվարի 5-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում, պարանոցի եւ բազուկների հատվածներում կատարել է ինքնավնասում՝ պատճառելով առողջության կարճատեւ քայքայումով առողջությանը թեթեւ վնաս: Բացի այդ, Գառնիկ Բաղդասարյանը, հանդիսանալով ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձ, նույն հիմնարկի թիվ 45-րդ խցում մեկանգամյա օգտագործման սափրիչից պատրաստել, պահել եւ կրել է առողջությանը վնաս պատճառելու համար այլ գործիք հանդիսացող առարկա՝ ածելու սայր, որով 2026 թվականի ապրիլի 13-ին՝ ժամը 13:15-ի սահմաններում, պարանոցի հատվածում կատարել է ինքնավնասում՝ պատճառելով առողջությանը թեթեւ վնասի հատկանիշ չպարունակող կտրած վերք:

Ք. Մ.

ԿՈՄԻՏԵՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է

Երեկ ArmLur.am-ը գրել էր, որ իրավապահները մտել են Վանաձորի «Ուժեղ Հայաստան» կուսակցության գրասենյակ, եւ այնտեղ խառնաշփոթ իրավիճակ է: Հակակոռուպցիոն կոմիտեն հաստատում է ArmLur.am-ի տեղեկությունները. «Ի պատասխան լրատվամիջոցներից ստացվող բազմաթիվ հարցումների՝ տեղեկացնում ենք, որ ընտրակաշառք տալու եւ քաղաքացիների ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու նախապատրաստման դեպքերի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում կատարվել են մի շարք խուզարկություններ եւ վարութային այլ գործողություններ «Ուժեղ Հայաստան» կուսակցության՝ Լոռու մարզում գործող գրասենյակներում: Խուզարկություն է իրականացվել նաեւ «համակցված կերերի» խանութի ներքո քողարկված գրասենյակում: Կան ձերբակալված անձինք: Կատարվում է նախաքննություն: Անհրաժեշտության դեպքում կտրվի լրացուցիչ տեղեկատվություն»:

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ ԵՆ

Մայիսի 6-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 02:50-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Նոր Նորքի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ «մարմնի տարբեր հատվածների կտրած-ծակած վերք» ախտորոշմամբ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն բուժօգնության է տեղափոխվել մի երիտասարդ: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց է մեկնել ոստիկանության Նոր Նորքի բաժնի հերթապահ խումբը՝ ավագ համայնքային ոստիկանի գլխավորությամբ, որտեղ պարզվել է, որ վիրավորը Երեւանի բնակիչ 23-ամյա Առնո Գ.-ն է: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ տեղում ոստիկանները պարզել են, որ վիրավորը վնասվածքը ստացել է Նոր Նորքի 4-րդ զանգվածում գտնվող թիվ 150 դպրոցի մոտ վիճաբանության ժամանակ անհայտ անձի կողմից դանակին նմանվող առարկայով հարվածներ հասցնելու հետեւանքով եւ ոստիկանները ձեռնարկում են միջոցառումներ՝ անհայտ անձի ինքնությունը պարզելու, նրան եւ հանձագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ: Դեպքի փաստով ոստիկանության Նոր Նորքի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին:

«Ո՞Վ Է ԱՀԱԲԵԿՎԵԼ»

Armlur.am-ի նկարահանող խումբը երեկ եղել է Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշ թաղամասում ու գրուցել ԱԱԾ շենքը հրկիզել փորձող Ռաֆֆի Մանդալյանի հայրիկի՝ Կարապետ Մանդալյանի հետ: Ինչպես հայտնի է, մարտի 6-ին՝ 19:00-ի սահմաններում, համացանցում տեսանյութ տարածվեց, թե ինչպես է 32-ամյա Ռաֆֆի Մանդալյանը հրավառ շշեր նետում ԱԱԾ շենքի վրա ու ցանկանում այն հրկիզել: Հայտնել էինք, որ շենքի վրա նետվել էր Մոլոտովի կոկտեյլ՝ հայտնի նաեւ որպես բենզինով պայթուցիկ, շշառումբ, աղքատի նռնակ, կրակային պայթուցիկ կամ պարզապես Մոլոտով: Անվանումն օգտագործվում է մի շարք ինքնաշեն հրդեհ առաջացնող պայթուցիկ նյութերի համար: Ռաֆֆի Մանդալյանը դեպքից անմիջապես հետո կալանավորվեց, եւ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի հատկանիշներով՝ ահաբեկչություն: Ռաֆֆի Մանդալյանը կալանավորված է եւ այս պահին գտնվում է Նուբարաշենի բանտում: Ի՞նչ է հորդորում կալանավորվածի հայրը իրավապահներին:

Տեսանյութը՝ ArmLur.am կայքում

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔ ՏԱԼՈՒ ԴԵՊՔ

Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժնի ծառայողները, իրացնելով մայիսի 13-ին ստացած օպերատիվ տեղեկությունը, պարզել են, որ Նոր Խարբերդ գյուղի 49-ամյա բնակիչը, վարչական շրջանի ընտրատեղամասերից մեկում լինելով լիազոր անդամ, ընտրություններին մասնակցող կուսակցություններից մեկի օգտին քվեարկելու համար 68-ամյա համագյուղացուն 50 հազար դրամ է տվել: Ձերբակալման ժամանակ 49-ամյա տղամարդն իր վարած «Տոյոտա» մակնիշի մեքենայով փորձել է դիմել փախուստի, ինչը կանխվել է: Կաշառք տալու հիմնավոր կասկածանքով նա ձերբակալվել եւ տեղափոխվել է Շենգավիթի բաժին, ապա կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե: Ոստիկանությունից հիշեցնում են, որ ընտրակաշառք տալը, ստանալը, ինչպես նաեւ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը քրեորեն պատժելի արարք են, եւ կոչ է անում զերծ մնալ հակաօրինական գործողություններից:

ԴԱՆԱԿԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՎԱԾ Է ՀԱՍՑՐԵԼ

Հիվանդանոցից ահազանգ է ստացվել, որ կտրած-ծակած վերքերով բուժօգնության է դիմել էջմիածնի բնակիչ 15-ամյա մի պատանի: Այս մասին նշված է ՀՀ ՆԳՆ տարածած հաղորդագրությունում: «Մեկնել են Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողներ: Ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Էջմիածնի Սպանդարյան փողոցում, խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալվել եւ բաժին է տեղափոխվել էջմիածինցի 18-ամյա երկու երիտասարդ: Հետագա միջոցառումներով պարզվել է, որ Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղի բնակիչն ու նրա ընկերները Էջմիածնի Վազգեն Առաջինի փողոցում վիճաբանել են բուժօգնության դիմած եւ արդեն ձերբակալված երիտասարդների հետ, որի ընթացքում էլ Նոր Գեղիի բնակիչը դանակի մի քանի հարված է հասցրել 15-ամյա պատանուն, իսկ 18-ամյա էջմիածինցին մեկնարկային ատրճանակով երկու անգամ կրակել է օդ: Նախապատրաստված փաստաթղթերը ներկայացվել են Վաղարշապատի քննչական բաժին: Նախաձեռնվել է քրեական վարույթ խուլիգանության եւ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու հատկանիշներով: Հանցագործության գործիք ատրճանակը հայտնաբերվել է: Ձեռնարկվում են միջոցառումներ դեպքի մասնակից բոլոր անձանց հայտնաբերելու ուղղությամբ»,- ասվում է հաղորդագրությունում:

● *Հայաստանի Հանրապետությունում անցած 1 օրում գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 1 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏՆՕՐԵՆ ՉՈՒՆԵՆ

Հանրակրթական դպրոցներում եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում խնդիր է տնօրենների թափուր հաստիքների մեծ թիվը: Երկու տարի, ինչ միավորվել են Դիլիջանի պետական եւ բժշկական քոլեջները, միավորված քոլեջը կոչվում է Դիլիջանի պետական բազմագործառութային քոլեջ: Միավորված քոլեջի տնօրենի պաշտոնակատար է նշանակվել Վահագն Հովհաննիսյանը, ով մինչ այդ Դիլիջանի պետական քոլեջի տնօրենն էր: Երկու տարի Դիլիջանի բազմագործառութային քոլեջի տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթները չեն կայանում, քանի որ մրցույթում ԿԳՄՍ ներկայացուցիչը չի ներկայանում: Այդ մասին ԿԳՄՍ նախարարությունից լրագրողիս հայտնել են. «Վահագն Հովհաննիսյանը 2024թ. մայիսի 21-ին նշանակվել է որպես «Դիլիջանի պետական բազմագործառութային քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: 2025 եւ 2026 թվականների ընթացքում տնօրենի թափուր տեղի համալրման համար պարբերաբար հայտարարվել են մրցույթներ, որոնք չեն կայացել տարբեր պատճառներով: Ինչ վերաբերվում է լիազոր մարմնի մասնակցությանը, ապա հարկ եմ համարում նշել, որ ներկայությունը հնարավոր չի եղել ապահովել աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով»:

Մրցույթին մասնակցելը մրցութային հանձնաժողովում ԿԳՄՍ ներկայացուցչի աշխատանքային պարտականությունն է, որը նա պարտավոր էր կատարել: Իսկ եթե տվյալ պաշտոնյան կարեւոր այլ աշխատանք ուներ, նախարարությունը կարող էր նրան փոխարինել այլ ներկայացուցչով, ոչ թե բոյկոտել հայտարարված մրցույթները: Մայիսի 5-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Մայիսի 5-ի դրությամբ ՀՀ-ում հանրակրթական դպրոցների եւ միջին մասնագիտական եւ արհեստագործական ծրագրեր իրականացնող կրթական հաստատությունների, քոլեջների տնօրենների քանի՞ թափուր հաստիք կա»: Մայիսի 12-ին ստացել եմ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի պատասխանը. «2026թ. ապրիլի վերջի տվյալներով կառավարման նոր համակարգի է անցել ընդհանուր 669 դպրոց: Այդ դպրոցներից 323-ում տնօրենի պաշտոնը սահմանված կարգով համալրված չէ: ՀՀ-ում գործում են ավելի քան 90 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցից շուրջ 20-ում առկա են տնօրենի թափուր հաստիքներ: Դրանք համալրելու նպատակով սահմանված կարգով հայտարարվում են մրցույթներ: Տնօրենի մրցութային ընտրության եւ թափուր տեղի համալրման կազմակերպման եւ անցկացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1494-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵՐԺԵՑԻՆ

Ո՞Վ Է ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՒ «ԱԼՅԱՆՍ»-Ը

2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ՝ ArmLur.am-ը շարունակում է ներկայացնել առաջադրված քաղաքական ուժերի առաջնորդների կենսագրություններն ու գույքային հայտարարագրերը: Այս անգամ ուշադրության կենտրոնում է «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության ցուցակի փաստացի առաջին համարը՝ Աշոտ Գալստյանը, որի վերաբերյալ հանրային տիրույթում կենսագրական տվյալներ գրեթե չկան:

Հատկանշական է, որ կուսակցության պաշտոնական առաջին համար Տիգրան Ուրիխանյանի թեկնածությունը ԿԸՀ-ի կողմից մերժվել է, ինչից հետո ցուցակի առաջատար դիրքում հայտնվել է հենց Աշոտ Գալստյանը: Կուսակցությունը ընտրություններին մասնակցում է 13 համարի ներքո:

ԿԸՀ-ի որոշման համաձայն՝ Տիգրան Ուրիխանյանի դեպքում խախտվել էր վերջին 4 տարվա ընթացքում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու եւ վերջին 4 տարվա ընթացքում ՀՀ-ում մշտական բնակություն ունենալու սահմանադրական պահանջը: Ըստ հանձնաժողովի՝ թեկնածուն համապատասխան փաստաթուղթ չէր ներկայացրել, ինչի հետեւանքով նրա գրանցումը մերժվել էր: Հիշեցնենք, որ դեռեւս 2024 թվականին ԱԺ նախկին պատգամավոր, «Ալյանս» կուսակցության ղեկավար Տիգրան Ուրիխանյանը ձերբակալվել էր Ռուսաստանում: Նրա նկատմամբ հայտարարվել էր դաշնային հետախուզում՝ հայաստանյան իշխանությունների պահանջով հարուցված քրեական գործի շրջանակներում:

Ինչ վերաբերում է Աշոտ Գալստյանին, ապա նրա մասին բաց աղբյուրներում կենսագրական տեղեկություններ գրեթե հնարավոր չէ գտնել: Սակայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացված 2025 թվականի տարեկան հայտարարագրից պարզ է դառնում, որ նա 2021 թվականի հոկտեմբերի 2-ից հանդիսանում է «Ալյանս առաջադիմական ցենտրիստական կուսակցության» վարչության անդամ:

Հայտարարագրի համաձայն՝ Գալստյանը Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում ունի բաժնային սեփականությամբ բնակարան՝ 1/2 բաժնեմասով, որը ձեռք է բերվել 2017 թվականին: Նա նաեւ հայտարարագրել է 2004 թվականի արտադրության MERCEDES-BENZ մակնիշի ավտոմեքենա, որը գնել է 2015 թվականին: Բանկային հաշիվներում հաշվետու տարվա վերջում նա ունեցել է ընդամենը 3 հազար դրամ, իսկ կանխիկ միջոցները կազմել են 1 միլիոն 100 հազար դրամ: Գալստյանի տարեկան եկամուտը կազմել է 1 միլիոն 375 հազար 268 դրամ: Այդ գումարից 674 հազար 588 դրամը գոյացել է «ՇԻՆՀԱՅ-ՊՈ» ընկերությունից ստացած աշխատավարձից, 78 հազար 500 դրամը՝ «ՋԵՐՄԳԱՋՇԻՆ»-ից, իսկ 619 հազար 140 դրամը ստացել է Միասնական սոցիալական ծառայության Ավանի եւ Նոր Նորքի տարածքային կենտրոնից:

Միեւնույն ժամանակ հայտարարագրում առկա են նաեւ զգալի վարկային պարտավորություններ: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Գալստյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը կազմել է 3 միլիոն 38 հազար 385 դրամ, 4 հազար 875 ԱՄՆ դոլար եւ եւս 1 միլիոն 198 հազար 755 դրամ:

Այսպիսով, ընտրապայքարի թեժ փուլում «Ալյանս» կուսակցության ցուցակի առաջատար դարձած Աշոտ Գալստյանը շարունակում է մնալ հանրության համար քիչ ճանաչված գործիչ: Մինչ քաղաքական դաշտում հիմնական քննարկումները շարունակում են ծավալվել Տիգրան Ուրիխանյանի շուրջ ստեղծված իրավիճակի շուրջ, կուսակցության փաստացի առաջին համարի մասին առկա տեղեկությունները սահմանափակվում են հիմնականում նրա գույքային հայտարարագրով: Իսկ թե որքանով կհաջողվի քիչ հայտնի թեկնածուին քաղաքական ակտիվ պայքարում փոխարինել կուսակցության առաջնորդին եւ գրավել ընտրողների վստահությունը, ցույց կտան արդեն հունիսի 7-ի ընտրությունները:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԴԻՄԵԼ Է ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

«Միասնության թեւեր» կուսակցության վարչապետի թեկնածու Արման Թաթոյանը հատուկ ուղերձով դիմել է պետական համակարգի աշխատողներին: Թաթոյանը նշել է, որ բժիշկները, մանկավարժները, իրավապահ մարմինների աշխատակիցները, դատավորները, ինչպես նաեւ նախարարությունների, մարզպետարանների ու համայնքապետարանների աշխատողները իրենց ամենօրյա աշխատանքով ծառայում են Հայաստանի Հանրապետությանը: «-Դուք ձեր աշխատանքով ծառայում եք Հայաստանի Հանրապետությանը: Ձեր աշխատանքը մեր պետականության կարեւոր հենասյուներից է: Ես գիտեմ, որ ձեզանից շատերը համաձայն չեն այս իշխանության վարած քաղաքականության հետ: Ես գիտեմ ու հասկանում եմ, որ դրա մասին հրապարակային չեք արձագանքում, որովհետեւ մի դեպքում չեք ուզում օրենք խախտել, մեկ այլ դեպքում ուզում եք պաշտպանված պահել ձեր ընտանիքները, պահպանել աշխատանքը»,- նշել է նա: Նա վստահեցրել է, որ պետական համակարգի աշխատողների համար կիրականացվեն հատուկ սոցիալական ծրագրեր, որոնք կապահովեն նրանց եւ նրանց ընտանիքների պաշտպանվածությունն ու բարեկեցությունը: «Ինձ հետ դուք կլինեք պաշտպանված, ձեր ընտանիքները կլինեն պաշտպանված: Պետական համակարգում աշխատելը կլինի պատվաբեր՝ բարձր աշխատավարձով: Առաջխաղացման հիմքում կդրվի արդարությունը, գիտելիքն ու կարողությունը, հայրենիքի նկատմամբ սերը եւ պետականության հանդեպ նվիրումը»,- ընդգծել է Թաթոյանը:

ՊԵՌԱՇԿԻ ՈՒՏՈՂ ԻԴԻՈՏՆԵ՞Ր, ԹԵ՞...

«Միասնության թեւեր» կուսակցության վարչապետի թեկնածու Արման Թաթոյանը ուղերձով դիմել է երիտասարդներին՝ շեշտելով, որ բարձրագույն կրթությունը պետք է հասանելի լինի բոլորին՝ անկախ սոցիալական վիճակից: Մասնավորապես նշել է, որ այսօր մեր երկիրը ղեկավարում է մի մարդ, ում համար ավելի կարեւոր է պարգեւավճարներ բաժանելը ինքն իրեն ու իր համար աշխատող պեռաշկի ուտող իդիոտներին, քան մեր երիտասարդներին հնարավորություն տալը, որ նրանք անվճար սովորեն համալսարանում՝ անկախ ծնողների ֆինանսական վիճակից: Արման Թաթոյանը կիսվել է նաեւ իր անձնական փորձով՝ նշելով, որ ինքն անձամբ անցել է դժվարությունների միջով եւ սեփական ուժերով հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ, սակայն չի ցանկանում, որ Հայաստանի երիտասարդությունը եւս նույն ճանապարհով անցնի: «Ես հասկանում եմ ձեզանից շատերին: Ես ինքս անցել եմ բազմաթիվ դժվարությունների միջով, առաջ եմ գնացել, պայքարել եմ, ապավինել եմ միայն սեփական ուժերիս, բայց ես չեմ ուզում, որ դուք եւս ստիպված լինեք անցնել այդ նույն դժվարություններով: Ես երբեք չեմ ընդունի, որ Հայաստանում երիտասարդի ապագան որոշվի ոչ թե նրա գիտելիքով ու կարողությամբ, այլ ծնողի դրամապանակով»,- հայտարարել է վարչապետի թեկնածուն:

● *Անցած 1 օրում գրանցվել է 11 ավտովթար. 1 մարդ զոհվել է, 11-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

65 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ

ՄԱՀԱՑԵԼ Է ԳԵԼԸ

65 տարեկանում մահացել է ՀՀ ոստիկանության զորքերի նախկին հրամանատար, գեներալ լեյտենանտ Գարեգին Գաբրիելյանը՝ առավել հայտնի Գել մականունով: Նա մահացել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

Գարեգին Գաբրիելյանը երկար տարիներ եղել է հայկական զինված եւ իրավապահ համակարգերի առանցքային դեմքերից մեկը՝անցնելով զինվորական ծառայության տարբեր փուլերով ու ղեկավարելով մի շարք կարեւոր ստորաբաժանումներ:

1979-1983 թվականներին սովորել եւ ավարտել է Բաքվի բարձրագույն համազորային հրամանատարական ուսումնարանը: 1989 թվականին Սարատովում անցել է մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:

1983-1988 թվականներին ծառայել է Գերմանիայում՝ նախ որպես դասակի, ապա՝ վաշտի հրամանատար: 1988 թվականին վերադարձել է Անդրկովկասյան զինվորական օկրուգ, այնուհետեւ տարբեր պաշտոններ զբաղեցրել ռազմական կոմիսարիատներում:

1992-1994 թվականներին ծառայել է ՀՀ պաշտպանության նախարարության Վարդենիսի պարետատանը՝որպես պարետ: Հետագայում անցել է ծառայության ներքին զորքերում եւ պաշտպանության նախարարության տարբեր զորամասերում՝ զբաղեցնելով հրամանատարական բարձր պաշտոններ:

2008 թվականի հուլիսի 2-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար եւ ոստիկանության պետի տեղակալ: Այդ պաշտոնում նա մնացել է մինչեւ 2012 թվականը:

2014 թվականի նոյեմբերի 28-ին նախագահի կարգադրությամբ նշանակվել է Հայաստանի Հանրապետության նախագահի գլխավոր ռազմական տեսչի առաջին տեղակալ:

Գարեգին Գաբրիելյանի անունը երկար տարիներ կապվել է Հայաստանի ռազմական եւ ուժային կառույցների հետ, իսկ նրա ծառայողական ուղին ընդգրկել է ինչպես բանակը, այնպես էլ ներքին զորքերն ու ոստիկանության համակարգը:

«Ժողովուրդ» օրաթերթի եւ ArmLur.am-ի խմբագրակազմը ցավակցում է ընտանիքի անդամներին եւ հարազատներին:

ԶՊՄԿ

«ՁԵՐԾ ՄՆԱՅԵՔ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԱՆՈՒՆԸ ՇԱՀԱՐԿԵԼՈՒՑ»

ԶՊՄԿ լրատվության եւ հասարակայնության կապերի բաժնի պետ Արայիկ Մարգարյանը գրում է.

«Հարգելի գործընկերներ,

Վերջին շրջանում Oragir.news լրատվականը հոդվածներ է հրապարակել ԶՊՄԿ-ի գործունեության վերաբերյալ՝ տարածելով իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ եւ անելով մոլորեցնող պնդումներ: Քանի որ այդ հրապարակումները առաջացրել են լրատվական դաշտում տարբեր գործընկերների կողմից որոշ հարցեր, հարկ եմ համարում հրապարակայնորեն արձագանքել այդ ապատեղեկատվությանը:

Այսպես, խնդրո առարկա հրապարակումներից մեկում հեղինակը պնդում է, որ «ԶՊՄԿ-ն, որը երկար տարիներ համարվում էր խոշորագույն հարկատուն, արդեն պարբերաբար զիջում է առաջատարի դիրքերը»:

Իրականում՝ ճիշտ հակառակը. ԶՊՄԿ-ն միայն 2021թ.-ից է 4 տարի անընդմեջ գլխավորել խոշոր հարկատուների ցուցակը, ինչն աննախադեպ ցուցանիշ է եղել ԶՊՄԿ-ի համար: Դրանից առաջ՝ 10 տարիների ընթացքում, ընկերությունը միայն մեկ անգամ է զբաղեցրել 1-ին տեղը, իսկ 2016 թվականին 1000 խոշոր հարկատուների ցուցակում հանգրվանել էր 16-րդ հորիզոնականում:

Սրա հետ մեկտեղ հիշեցնեմ, որ հարկատուների ցուցակում հարկատուների դիրքը կախված է ամենատարբեր հանգամանքներից: 2025 թվականին ԶՊՄԿ-ն 3-րդ հորիզոնականում է հայտնվել տնտեսության իրական ցուցանիշներին չառնչվող տեխնիկական պատճառներով՝ իրականում շարունակելով առաջինը լինել տնտեսական արդյունքների առումով: Այս տարի վստահ ենք՝ վերադարձնելու ենք նաեւ առաջատարի ֆորմալ դիրքերը:

Հաջորդ պնդումը վերաբերում էր համաշխարհային շուկայում ԶՊՄԿ-ի դերին,



որը կրկին հիմնված է ոչ պրոֆեսիոնալ եւ շփոթեցնող պնդումների վրա: Այսպես, հոդվածագիրը պնդում է, որ, լինելով աշխարհում մոլիբդենի խոշոր արդյունահանողների առաջին քսանյակում, նախորդ տարի ընկերության մասնաբաժինը մոլիբդենի համաշխարհային արտադրության մեջ կազմել է 2.2 տոկոս:

Տարբեր հաշվարկներով՝ Քաջարանի հանքավայրում է գտնվում մոլիբդենի համաշխարհային պաշարների շուրջ 7 %-ը, սակայն սա խորհրդային տվյալների վրա հիմնված մոտավոր, պայմանական հաշվարկ է: Բայց խնդիրը նույնիսկ դա չէ: Պարզ մաթեմատիկայից հասկացող ցանկացած մարդու համար ակնհայտ է, որ գնահատված պաշարները եւ տարեկան արտադրության տոկոսները՝ համաշխարհային արտադրության ենթատեքստում, տարբեր հասկացություններ են: ԶՊՄԿ-ն բազմիցս հայտարարել է, որ տնօրենների խորհրդում կառավարության կամ այլ բաժնետերերի ներկայացուցիչները ուղղակի չեն մասնակցում կառավարչական գործունեությանը, եւ խորհրդում 21,8%-ի բաժնետիրոջ ներկայացուցիչը չի կարող ազդեցություն ունենալ «Հայաստանի մոլիբդենային ներուժի նվազեցման» կամ ավելացման վրա:

Օգտվելով առիթից՝ ուզում եմ նաեւ արձագանքել որոշ քաղաքական գործիչների կողմից երբեմն հնչող անհիմն հայտարարություններին եւ ամենայն պատասխանատվությամբ պնդել, որ ԶՊՄԿ-ն որեւէ քաղաքական ներգրավվածություն եւ ֆինանսական մասնակցություն չունի: Աշխատակիցների անձնական ծախսերն իրենց անձնական իրավասությունն են:

Առանց վարանելու կարող ենք պնդել, որ ԶՊՄԿ-ն Հայաստանում ամենաթափանցիկ աշխատող ընկերությունների առաջնագծում է՝ թե՛ ֆինանսական հոսքերի, թե՛ մյուս ցուցանիշների մասով: Իրական շահառուների մասին բոլոր տեղեկությունները ներկայացված են՝ օրենքին եւ ԱՃԹՆ պարտավորությունների շրջանակին համապատասխան: Իսկ թե ինչու լրագրողը չի կարողանում տեղեկություններ գտնել բաց աղբյուրներից, չեմ կարող մեկնաբանել: Հեղինակը չի կարողացել անգամ բաց աղբյուրներից ճշտել սեփականատերերից մեկի մասնաբաժնի ծավալը՝ նրան վերագրելով առնվազն 5 անգամ ավելի մեծ մասնաբաժին:

Միաժամանակ կարծում եմ, որ լրատվական դաշտում մեր բոլոր գործընկերները առնվազն ոչ պրոֆեսիոնալ կհամարեն այն հանգամանքը, որ լրագրողը մեզ ուղղված հարցումն ուղարկել է հոդվածը հրապարակելուց մեկ ժամ անց, եւ ոչ թե դրանից առաջ, ինչից ակնհայտ է, որ նպատակը, ցավոք, իրականությունն իմանալը չէր:

Ամփոփելով՝ ուզում եմ հիշեցնել, որ ԶՊՄԿ-ն ՀՀ տնտեսության շարժիչ ուժն է եւ հորդորում եմ զերծ մնալ քաղաքական նպատակներով ընկերության անունը շահարկելուց: Ապատեղեկատվության եւ չստուգված ու կեղծ պնդումների տարածումը կանխելը տնտեսության երկարաժամկետ շահերից է բխում: Այլապես, չէի արձագանքի նաեւ այժմ»:

ՏԵԼԵԳՐԱՖԻՑ ՄԻՆՉԵՎ 5G

Կապի թանգարանն այս տարի եւս միանում է թանգարանային տոներին: Թանգարանների գիշերը՝ մայիսի 16-ին, եւ Թանգարանների միջազգային օրը՝ մայիսի 18-ին, այցելուները կարող են ծանոթանալ հեռահաղորդակցության հայաստանյան ողջ պատմությանը:

Թանգարանում ցուցադրված են տարբեր ժամանակներում օգտագործված կապի սարքավորումներ՝ տելեգրաֆ, ռադիոկապի սարք, Մորզեի սարք, տաքսաֆոններ եւ այլ սարքեր: Այցելուները կարող են տեսնել՝ ինչպիսին էր կապը հարյուրամյակներ առաջ, եւ ինչ ճանապարհ է եղել դեպի ֆիքսված, բջջային եւ ինտերնետ կապի թվային ժամանակակից միջոցներ:

«Team-ը՝որպես ազգային օպերատոր եւ Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդ՝ սիրով է կրում կապի պատմությունը պահպանելու եւ սերունդներին փոխանցելու պատասխանատվությունը: Հեռահաղորդակցությունը մեր երկրում իսկապես հետաքրքիր ու բազմաշերտ ճանապարհ է անցել՝ նշանակալի դերակատարում ունենալով Հայաստանում տեխնոլոգիաների զարգացման համար: Այդ ողջ ճանապարհը ներկայացնում ենք թանգարանում՝ պարբերաբար համալրելով նմուշները անհավանական արագությամբ զարգացող ոլորտին բնորոշ նոր

սարքավորումներով եւ սիրով հրավիրում ենք բոլորին ծանոթանալու հեռահաղորդակցության էվոլյուցիային»,-ասում է Team Telecom Armenia-ի հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Գրիգորի Յուրինը:

Տարվա ամենաթանգարանային օրերին Կապի թանգարանը խոստանում է ապահովել ինտերակտիվ ու հիշարժան փորձառություն. այցելուները կարող են պրոֆեսիոնալ էքսկուրսավարի ուղեկցությամբ ոչ միայն ուսումնասիրել, այլեւ փորձարկել տասնամյակների վաղեմության տարբեր սարքավորումների աշխատանքը՝ զգալով տեխնոլոգիական առաջընթացը:

Թանգարանը Երեւանի Կապի շենքում է՝ Ազատության 24/1 հասցեում, մայիսի 16-ին կգործի 15:00-21:00-ն, մայիսի 18-ին՝ 15:00-18:00-ն: Տոնական օրերից բացի մյուս օրերին եւս թանգարանը սպասում է կապի պատմությամբ հետաքրքրված այցելուներին: Անհրաժեշտ է նախապես գրանցվել՝ զանգահարելով +374 99 000811 հեռախոսահամարին կամ գրելով museum@telecomarmenia.am էլեկտրոնային հասցեին: Մուտքն ազատ է:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՔԵՂ

ՔԻՄ ՔԱՐԴԱՇՅԱՆԻ ՈՐԴՈՒ ԾՆՆԴՅԱՆ ԽՆՔՈՒՅՔԸ

Քիմ Քարդաշյանի եւ Քանյե Ուեսթի կրտսեր որդին՝ Փսալմ Ուեսթը, նշել է իր 7-ամյակը՝ իսկական Pokemon հեմիաթային մթնոլորտում: Հանրահայտ հեռուստաաստղն ու գործարար կինը որդու համար կազմակերպել էր գունեղ եւ տղավորիչ երեկույթ, որը լի էր սիրված մուլտիերոսներով, խաղերով եւ յուրահատուկ դեկորներով:

Ծննդյան միջոցառումը ձեւավորված էր ամբողջությամբ Pokemon թեմայով: Տարածքում տեղադրված էին հսկայական Poke Ball փուչիկներ, մեծ չափերի Pokemon քարտեր, ինչպես նաեւ կյանքի չափի Pikachu կերպար, որը դարձել էր երեխաների գլխավոր ուշադրության կենտրոնը: Տոնական սեղաններն ու դեկորացիաները եւս ընտրված էին նույն ոճով՝ ստեղծելով իրական Pokemon աշխարհի տպավորություն:

Քիմ Քարդաշյանը Instagram-ի իր էջում հրապարակել էր երեկույթի լուսանկարները՝ կարճ, բայց խոսուն գրառմամբ. «Pokemon Psalm!»: Հրապարակված կադրերը մեծ արձագանք էին ստացել երկրպագուների շրջանում, որոնք հիացել էին թե՛ ձեւավորմամբ, թե՛ երեխաների ուրախ տրամադրությամբ:

Փսալմը երեկույթին ներկայացել էր սեւ Pikachu պատկերով շապիկով, որը նա ավելի վաղ կրել էր ընտանիքի հետ Տոկիո կատարած այցի ժամանակ: Նրա քույրը նույնպես հետեւել էր թեմային՝ ընտրելով Pokemon հերոսներով սպիտակ շապիկ: Իսկ եղբայրը նախընտրել էր ավելի հանգիստ կերպար՝ մոխրագույն շապիկ եւ բաց գույնի ջինսե տաբատ: Թեեւ ընտանիքի ավագ երեխան՝ Նորթը, լուսանկարներում չէր երեւում, երեկույթին ներկա էին բազմաթիվ հարազատներ եւ ընկերներ: Միջոցառմանը մասնակցում էր նաեւ Dream Kardashian-ը, որը եւս վայելում էր տոնական մթնոլորտը:

Pokemon-ի հանդեպ հետաքրքրությունը նոր չէ Քարդաշյանների ընտանիքում: Ավելի վաղ Քիմը հաճախ էր կիսվում երեխաների հետ Pokemon քարտեր հավաքելու եւ բացելու տեսանյութերով: Նրան նույնիսկ նկատել էին Steve Aoki-ի հետ Pokemon քարտեր ուսումնասիրելիս: Բացի այդ, Քիմ Քարդաշյանը վերջերս ձեռք էր բերել հազվագյուտ եւ բարձր գնահատական ունեցող Hidden Fates Shiny Charizard քարտը, որը Pokemon հավաքորդների շրջանում համարվում է շատ արժեքավոր:

Հիշեցնենք, որ նախորդ տարի Փսալմի ծննդյան երեկույթը կազմակերպվել էր Deadpool & Wolverine ֆիլմի թեմայով, ինչը եւս լայն քննարկումների թեմա էր դարձել սոցիալական ցանցերում:

Քիմ Քարդաշյանը բազմիցս նշել է, որ Փսալմը առանձնահատուկ տեղ ունի ընտանիքում: Դեռ 2019 թվականին նա պատմել էր, որ որդու ծնունդը օգնել է ընտանիքի անդամներին ավելի մտերմանալ եւ համախմբվել: «Բոլորը պարզապես տարված են նրանով», -ասել էր նա հարցազրույցներից մեկում՝ ընդգծելով, որ փոքրիկ Փսալմը ընտանիքի սիրելի կենտրոնն է դարձել:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԱՆՑԱՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ

Հայաստանը չանցավ «Եվրատեսիլ 2026»-ի եզրափակիչ փուլ: Երեկ Վիեննայում կայացավ մրցույթի երկրորդ կիսաեզրափակիչը, որին մասնակցում էր 15 երկիր, որոնցից միայն 10-ը, սակայն, ստանացավ ուղեգիր դեպի մեծ եզրափակիչ, գրում է News.am-ը: Երկրորդ կիսաեզրափակիչը հաղթահարեցին հետեւյալ երկները՝ Բուլղարիա, Ուկրաինա, Նորվեգիա, Ավստրալիա, Ռումինիա, Մալթա, Կիպրոս, Ալբանիա, Դանիա, Չեխիա: «Եվրատեսիլ 2026»-ի եզրափակիչ փուլը կայանալու է մայիսի 16-ին: Մրցույթի առաջին կիսաեզրափակիչը մայիսի 12-ին էր, որի արդյունքում եզրափակչում հայտնվել են նաեւ Հունաստանի, Ֆինլանդիայի, Բելգիայի, Շվեդիայի, Մոլդովայի, Իսրայելի, Սերբիայի, Խորվաթիայի, Լիտվայի եւ Լեհաստանի ներկայացուցիչները: Հայաստանն այս տարի ներկայացնում էր Սիմոնը՝ Paloma Rumba երգով:

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ցավակցական ուղերձ է հղել Նիկոլայ Ծատուրյանի մահվան կապակցությամբ. «Խոր ցավով տեղեկացա ՀՀ ժողովրդական արտիստ Նիկոլայ Ծատուրյանի մահվան մասին: Նիկոլայ Ծատուրյանի ստեղծագործական ճանապարհը կյանքի եւ գործի համադրման լավագույն դրսեւորումներից է, տարիներ շարունակ նա բացառիկ նվիրումով ծառայել է հայ թատերարվեստին: Անգնահատելի է նրա դերն ու վաստակը Հայաստանի մշակութային կյանքում, հայ թատրոնի նոր սերունդ կրթելու եւ ձեւավորելու գործում: Նա ոչ միայն վարպետ բեմադրիչ էր, այլեւ նվիրյալ մանկավարժ, որն իր հարուստ փորձն ու գիտելիքն է փոխանցել սերունդներին՝ ձեւավորելով թատերարվեստին ու կինոարվեստին բնորոշ յուրահատուկ ճաշակ, իսկ ստեղծած թատերական կտավները՝ «Ծիրանի ծառ», «Ձեր կյանքի ժամերը», «Եւ երկինքեն երեք աթոռ ինկավ», իրավամբ, հարստացրել են մեր թատերական մշակույթը: Միաժամանակ, ցանկանում եմ ընդգծել Նիկոլայ Ծատուրյանի դերը որպես մտավորական, ով հանդես էր գալիս սուր եւ ճշմարիտ խոսքով՝ մշտապես բարձրաձայնելով ժողովրդին հուզող խնդիրների ու հարցերի մասին: ՀՀ Կառավարության եւ անձամբ իմ անունից խորին ցավակցություն եմ հայտնում Նիկոլայ Ծատուրյանի ընտանիքին, հարազատներին, գործընկերներին, ինչպես նաեւ հայ թատերարվեստի բոլոր երկրպագուներին»:

ԲԱՆԿԵՐ

ԱՐԴՇԻՆԲԱՆԿԸ ՄԻԱՑԵԼ Է

Արդշինբանկը, շարունակելով համագործակցությունը «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության հետ, 4 մլն ՀՀ դրամի չափով ֆինանսավորել է Շառլ Ազնավուրի անվանական անտառի ստեղծման աշխատանքները: Նախաձեռնությունը նվիրված է Շառլ Ազնավուրի ծննդյան օրվան եւ նպատակ ունի հարգանքի տուրք մատուցել աշխարհահռչակ հայի հարուստ ժառանգությանը՝ միաժամանակ նպաստելով կենսաբազմազանության պահպանմանը, կլիմայական փոփոխության մեղմմանը եւ Հայաստանի համայնքների կայուն զարգացմանը: Անտառի տարածքը գտնվում է Ծիրակի մարզի Ձորաշեն գյուղի հարակից տարածքում: Արդշինբանկի վարչության անդամ, ռիսկերի կառավարման տնօրեն Լուսինե Ներսիսյանի խոսքով՝ բնապահպանական նախաձեռնությունները բանկի սոցիալական պատասխանատվության ռազմավարության կարեւոր ուղղություններից են. «Արդշինբանկը, հանդիսանալով Հայաստանի խոշորագույն բանկը, մեծապես կարեւորում է երկրում սոցիալական պատասխանատվության մասին բարձրաձայնելն ու դրանում ակտիվ մասնակցություն ունենալը: Մենք ուզում ենք, որ բոլորը մեզ հետ միասին կարեւորեն այս խնդիրը. խոսքը պատասխանատվության եւ ապագա սերունդների համար ավելի առողջ միջավայր ձեւավորելու մասին է»: Մայիսի 9-ին կազմակերպված ծառատնկման աշխատանքներին մասնակցել են Արդշինբանկի աշխատակիցները՝ իրենց անձնական ներդրումն ունենալով նախաձեռնության կյանքի կոչման գործում: Ծառատունկի ընթացքում տնկվել է 300 սոճի: Արդշինբանկի ֆինանսավորմամբ նախատեսվում է ընդհանուր առմամբ տնկել շուրջ 5,000 ծառ՝ 1 հեկտար տարածքում:

Նախագիծը առանձնահատուկ է նաեւ իր գաղափարական բաղադրիչով. անտառում տեղադրվելու են արեւային էներգիայով աշխատող երաժշտական սյուներ, որոնցից կհնչեն Շառլ Ազնավուրի ստեղծագործությունները՝ այցելուների համար ձեւավորելով յուրահատուկ միջավայր: Արդշինբանկը շարունակում է զարգացնել նաեւ սեփական անվանական անտառի ծրագիրը՝ համագործակցելով «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ի հետ: 2024 թվականին մեկնարկած ծրագրի շրջանակում Լոռու մարզում արդեն տնկվել է ավելի քան 20,000 ծառ՝ շուրջ 6 հեկտար տարածքում, ինչպես նաեւ իրականացվել են լրացուցիչ ծառատնկումներ Գեղարքունիքի մարզում: Երկարաժամկետ կտրվածքով ծրագիրը նախատեսում է առաջիկա 30 տարիների ընթացքում տնկված ծառերի հաշվին կլանել մոտ 2,000 տոննա CO_2 արտանետումներ՝ նպաստելով Հայաստանի անտառային ֆոնդի ընդլայնմանը: «Այս նախաձեռնությունները կարեւոր նշանակություն ունեն հատկապես այն պայմաններում, երբ Հայաստանի անտառածածկը կազմում է շուրջ 10 տոկոս, ինչը զգալիորեն ցածր է մեր հարեւան երկրների ցուցանիշներից»,-նշեց Լուսինե Ներսիսյանը:

«Իմ անտառ Հայաստան» կազմակերպությունը վերջին տարիներին իրականացրել է ավելի քան 2.3 միլիոն ծառերի տնկման եւ անտառվերականգնման աշխատանքներ՝ ընդգրկելով շուրջ 750 հեկտար տարածք՝ միաժամանակ աջակցելով տեղական համայնքների զարգացմանը:

Արդշինբանկում կայուն զարգացումը դիտարկվում է որպես ռազմավարության առանցքային ուղղություններից մեկը, եւ բանկը շարունակելու է իրականացնել շրջակա միջավայրի պահպանմանն ու համայնքների զարգացմանն ուղղված երկարաժամկետ ծրագրեր:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ՝ ՀՈՎԱՆԱՎՈՐ



Հայաստանի սպորտային մագլցման ֆեդերացիայի աջակցությամբ Ver Var մարզասրահում կայացավ «Upside Down» մարզական ժայռամագլցման փառատոնը, որի հովանավորը Յունիբանկն էր: Փառատոնը միավորել էր ավելի քան 200 ժայռամագլցող տարբեր երկրներից: Մրցումների ուշադրության կենտրոնում հատկապես երիտասարդական ժայռամագլցումն էր: Փառատոնի հովանավորումը Յունիբանկի կողմից երկրում պրոֆեսիոնալ սպորտի զարգացմանն ուղղված նախաձեռնությունների շարունակությունն է: Յունիբանկի համար սպորտը մշտապես եղել է ուշադրության կենտրոնում: Բանկը հետեւողականորեն աջակցում է հայկական սպորտի զարգացմանն ու երիտասարդ մարզիկների առաջխաղացմանը՝ նպաստելով առողջ ապրելակերպի մշակույթի ձեւավորմանը: Յունիբանկը կշարունակի աջակցել Հայաստանի սպորտային մագլցման ֆեդերացիային՝ մարզիկների պատրաստվածության բարձրացման, միջազգային մրցաշարերին մասնակցության եւ ոլորտի զարգացման ծրագրերի իրականացման գործում:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում մայիսի 17-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Պոչատ աղվեսը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ է պահանջվում օտարերկրյա պետություններում ստացած գիտական աստիճանի դիպլոմի համապատասխանեցման համար, եթե տվյալ անձը ՀՀ-ում չէ:

Վահագն Գալստյան,
33 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Գիտական աստիճանի դիպլոմի համապատասխանեցումը՝ համարժեքության ճանաչումը եւ հաստատումը, կատարվում է գիտնականի դիմումի հիման վրա՝ լիազոր մարմնի կողմից սահմանված փաստաթղթերի եւ հրատարակված գիտական աշխատանքների առկայությամբ: Եթե տվյալը անձը ներկա չէ Հայաստանի Հանրապետությունում, ապա համապատասխանեցման գործընթացը իրականացնում է նրա կողմից լիազորված անձը՝ լիազորագրի եւ գիտական աստիճանի դիպլոմի բնօրինակի առկայության դեպքում: Համապատասխանեցման ենթակա դիպլոմի ՀՀ-ում թարգմանության եւ նոտարական վավերացման համար անհրաժեշտ է կոչումը շնորհած երկրի համապատասխան պետական մարմնի ապոստիլի առկայությունը:

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞r առարկաներն են արգելված ՀՀ տարածքում փոստային առաքանիներով առաքելու համար:

Սիմոն Հակոբյան,
40 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Առարկաներ, որոնք իրենց բնույթով կամ փաթեթավորմամբ կարող են վնաս հասցնել փոստային կապի կամ սուրհանդակային կապի օպերատորի աշխատողներին, աղտոտել փոստային կապի մյուս առաքանիներն ու սարքավորումները, թմրամիջոցներ կամ հոգեներգործուն, ռադիոակտիվ, պայթուցիկ, թունավոր, դյուրավառ եւ այլ վտանգավոր նյութեր, թունավոր կենդանիներ եւ բույսեր, Հայաստանի Հանրապետության դրամական նիշեր եւ տարադրամ (բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի եւ դրա մասնաճյուղերի կողմից ուղարկվող) շուտ փչացող սննդամթերք, հրազեն, գազային զենք, նետողական զենք, ազդանշանային զենք, օդաճնշիչ զենք, ռազմամթերք, սառը զենք, էլեկտրաշոկային սարքեր եւ կայծահաններ, ինչպես նաեւ զենքի եւ հրազենի հիմնական մասեր:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Արտակարգ իրավիճակ Այնթապում. ըստ բնակիչների՝ 1 տարի է՝ խմելու ջրի խողովակը վնասվել է, ու տոննաներով ջուրը կորչում է, «Վեոլիա ջուրը» բավարարվել է 2 անգամ անցքը «չիվիով» փակելով, իսկ ջուրը ոչ միայն կորչում է, այլեւ լցվում է մարդկանց տներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 2 + 5 + 9 + 14
	Կոտայքի լեռներ	+ 2 + 5 + 10 + 13
	Կոտայքի նախալեռներ	+ 6 + 10 + 14 + 17
	Գեղարքունիք	+ 2 + 6 + 10 + 13
	Լոռի	+ 4 + 8 + 14 + 17
	Տավուշ	+ 4 + 8 + 14 + 17
	Արագածոտնի լեռներ	+ 2 + 5 + 9 + 12
	Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 9 + 14 + 18

	Արարատ	+ 7 + 10 + 15 + 17
	Արմավիր	+ 8 + 12 + 16 + 19
	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 + 10 + 13
	Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 12 + 16 + 19
	Սյունիքի լեռներ	+ 1 + 4 + 9 + 12
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 + 12 + 15
	Սյունիքի հովիտներ	+ 10 + 14 + 20 + 24
	Երեւան	+ 9 + 11 + 16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*